ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ Պեատիգորսկ քաղաքի Աբրահամ քահանայ Շխինեանի անունով, որով, համաձայն Աստրախանի թեմական Առաջնորդի և Պեատիգորսկի ծխական Հոգաբարձութեան միջնորդութեան, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 15 ապրիլի, թ. 842:

Կոնդակ Կոկանդ քաղաքի Ներսէս քահանայ Աբրահամեանի անունով, որով, համաձայն Աստրախանի Հայոց թեմական Առաջնորդի միջնորդութեան, լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 15 ապրիլի, թ. 843:

ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Ն. Նախիջևանի և Բեսսարաբիայի թեմի Տ. Առաջնորդի 1915 թ. դեկտ. 5-ի, № 433, յայտարարութիւնը, որոշց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան թոյլ տալ Բեսսարաբիայի թեմի Առաջնորդին նշանակել Կոնսիստորիայի անդամ Տ. Բարսեղ ա. քահանայ Խաչանճեանին, տալով Կոնսիստորիայի անդամին յատկացեալ նպաստը: 4 մայիսի, թ. 245:

Սինօդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ ապրիլի 30-ի, թ. 974, մակագրութիւնը, որոշց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան պատուիրել Վրաստանի Կոնսիստորիային տալ Գանձակի Հոգևոր Կառավարութեան պաշտօնեաներին, առաջիկայ յունիսի մէկից յաւելեալ ռոճիկ, համաձայն ներկայացրած ցուցակի, փոխանորդին՝ 1500 ռ., գանձապահ անդամին՝ 156 ռ., քարտուղարին՝ 780 ռ., գրագրին՝ 390 ռ., գրագրի ժամ. օգնականին՝ 120 ռ. և ծառային 168 ռուբլի: 9 մայիսի, թ. 249:

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 9-ի, թ. 1023 մակագրութիւնն, որոշեց. համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան նախ՝ ազատ համարել Տ. Արիստակէս վարդապետին ագարակի կառավարչի պաշտօնից և ճանաչել կառավարիչ տիրացու Արշակ Դաւթեանին, երկրորդ՝ պատուիրել Վանական Կառավարութեան իւր մի անդամի ներկայութեամբ ստացողական և յանձնողական ցուցակով յանձնել տիրացու Արշակին ագարակը և երրորդ՝ պատուիրել գանձապահին տալ տիրացու Արշակին այս մայիսի 1-ից ռոճիկ և սննդադրամ ամսական 40 ռուբլի։ 11 մայիսի, թ. 250։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ յունուարի 27-ի, թ. 212, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Ապրակունիս գիւղի բնակիչ Կարապետ Տէր Գրիգորեանցին և առաջադրել թեմի փոխ-թեմակալին ձեռնադրել յիշեալ Տէր Գրիգորեանին քահանայ Արագին գիւղի վրայ։ 11 մայիսի, թ. 251։

Սինոդը՝ լսելով Գանձակի նահանգապետի 1915 թ. յուլիսի 10-ի, թ. 16788, մակագրութիւնն, որոշեց. պատուիրել Վրաստանի Կոնսիստորիային ընդունել հայ եկեղեցու գիրկը Գանձակ քաղաքի բնակիչ Սերգէյ Զաբաշվիլուն և կատարածի մասին տեղեկութիւն տալ Գանձակի նահանգապետին։ 11 մայիսի, թ. 252։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ մարտի 10-ի, թ. 682, յայտարարութիւնն, որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Խոշիսաբար գիւղի բնակիչ Պարոյր Տէր Բարսեղեանին և առաջադրել թեմի փոխ-թեմակալին ձեռնադրել յիշեալ Տէր Բարսեղեանին քահանայ նոյն գիւղի վրայ։ 13 մայիսի, թ. 260։

Սինոդը՝ լսելով Նորին Վեհափառութեան տարուայս ապրիլի 30-ի, թ. 978, մակագրութիւնն Ազոր գիւղի

ծխատէր Համազասպ քահ. Աւետսեանին Ախալցխա փոխադրելու մասին՝ որոշեց. յայտնել Վրաստանի Կոնսիստորիային ի կատարումն Նորին Սրբութեան հետևեալ մակագրութեան. «Ի նկատի ունենալով խնդրատու Համազասպ քահանայի կարեկցելի վիճակը և որն տարիներից ի վեր հովուել է Ախալցխայում, ներելով պատուիրում ենք Սինոդին կրկին հրաւիրել նորան Ախալցխա ըստ նախնոյն քահանայագործելու, վերադարձնելով նաև երդմնեցուցչական պաշտօնը, միաժամանակ նկատել նորան, որ զգոյշ լինի իւր արտայայտութիւնների մէջ դէպի Սինոդը ի խոյս ապագայ ծանր պատասխանատուութեան։ 13 մայիսի, թ. 262։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի այս տարուայ յունուարի 11-ի, թ. 62, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Մեծ Պարնի գիւղացի Խաչատուր Փահլևանեանին և առաջադրել թեմի Առաջնորդին ձեռնադրել յիշեալ Փահլևանեանին Խոժոռնի գիւղի վրայ։ 13 մայիսի, թ. 263։

Սինոդը՝ լսելով Վրաստանի Հ. Կոնսիստորիայի անցած տարուայ օգոստոսի 14-ի, թ. 4067, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Յովհաննէս Համբարեանին՝ տալով նրան դպրութեան աստիճան և կարգել պաշտօնեայ Լիս և յարակից գիւղերի վրայ։ 13 մայիսի, թ. 264։

Սինոդը՝ լսելով Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի Տ. Առաջնորդի յայտարարութիւնը, որ վերաբերում է Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունուող հրէաների համար կրօնական գիտելիքների ընդհանուր հրահանգ սահմանելուն, որ և հաստատել է Ազգիս Վեհափառ Հայրապետը, որոշեց. Վեհափառ Կաթուղիկոսի հաստատած վերոյիշեալ հրահանգութիւնն ուղարկել բոլոր թեմերն ի գործադրութիւն, պատուիրելով, որ հրէաների մկրտութեան համար միջնորդութիւն յարուցեն այն դէպքում, երբ հրա-

հանգի պահանջները կատարուած կլինեն։ 18 մայիսի, թ. 268։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան ամսոյս 11-ի, թ. 1035, մակագրութիւնն, որոշեց. պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ դպրոցական դրամագլխի տոկոսներից Բիւրականի դպրոցին այս տարուայ համար այլ ևս 100, իսկ առաջիկայ 1916/17 ուս. տարուանից, նոյն միջոցներից, տարեկան 200 ռուբլի։ 20 մայիսի, թ. 273։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 14-ի, թ. 1056, մակագրութիւնն, որոշեց. համաձայն Կաթուղիկոսի մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին տալ Վրաստանի Կոնսիստորիայի միջոցով Ղազախի գաւառի Թալա գիւղի ծխական դպրոցին նպաստ, դպրոցական դրամագլխի տոկոսներից, տարեկան 100 ռուբլի։ 20 մայիսի, թ. 274։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 16-ի, թ. 1072, մակագրութիւնն, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին բանալ վարկ պետական նպաստի գումարից 64514 ռուբլի Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով։ 20 մայիսի, թ. 275։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան մայիսի 18-ի, թ. 1083, մակագրութիւնը, որոշեց. համաձայն Նորին Վեհափառութեան մակագրութեան պատուիրել Մ. Աթոռի Գանձապահին բանալ վարկ Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով, գաղթականական գումարից, յիսուն հազար ռուբլու (50000 ռ.)։ 20 մայիսի, թ. 276։

Սինոդը՝ լսելով Նորին Սրբութեան այս տարուայ ապրիլի 20-ի, թ. 865, մակագրութիւնն – տաճկահպատակ բռնի մահմեդականութիւն ընդունած Մարիամ Շահնազարեարին և նորա երեխային վերստին Հայաստանեայց

եկեղեցու ծոցն ընդունելու մասին, որոշեց. պատուիրել Երևանի Կոնսիստորիային կարգադրել վերստին ընդունել Ղուրդուղուլի գիւղում բնակւող տաճկահայ փախստական, Արճէշի գաւառի, Մակծկա գիւղացի այրի Մարիամ Շահնազարեանին Հայ եկեղեցու գիրկը, մի ամսուայ եկեղեցական ապաշխարանքի ենթարկելուց յետոյ, որից յետոյ խոստովանեցնել և հաղորդել, այլ և մկրտել նորա երեխային Հայ եկեղեցու ծիսով։ 23 մայիսի, թ. 281։

Սինոդը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի այս տարուայ յունուարի 17-ի, թ. 513, յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Երևանի Կոնսիստորիային Հայ եկեղեցու գիրկն ընդունել տաճկահպատակ Զաչան Իբրահիմ օղլուն, որ ներկայումս վերաբնակւում է Աղէքսանդրապոլ քաղաքում։ 23 մայիսի, թ. 282։

Սինոդը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի այս տարուայ մարտ 24-ի, թ. 676 յայտարարութիւնն, որոշեց. պատուիրել Կոնսիստորիային ընդունել Աղէքսանդր Լիբովին Հայ եկեղեցու գիրկը։ 23 մայիսի, թ. 183։